

յաւ փողասինի կապուտակին մէջ լուծուած արծաթի կապուտակով՝ ամէն մետաղ դիւրաւ արծաթազօծելու :

Այս կերպով ոսկին ու փլաղինն ալ թէ որ մէկն ուզէ կրնայ արծաթազօծել . նմաննապէս արոյըը , թառճը ու պըղինձն ալ շատ աղէկ կրնան արծաթազօծուիլ , այնպէս որ ասկէ ետև արծաթէ թիթղան տեղ ասոնցմէ կրնան գործածուիլ . նոյնպէս անագը , երկաթն ու սլողպատը շատ դիւրաւ կ'արծաթազօծուին :

Այս արուեստով պղինձն ու արոյըը այնպէս դիւրին ու աղէկ կերպով կ'արծաթազօծուի որ ամէն տեսակ արծաթազօծումներէն վեր է :

Կերծապէս այս նորահնար արուեստով կարող ենք որ և իցէ մետաղ արծաթազօծել , վրանին ամենանուրբ՝ կամ թէ որ կ'ուզենք քիչ մը հաստ արծաթէ մաշկ մը պատել տալով , որով անոնց ոքսիտ կապելն ալ կ'արգիլուի :

Ինագն ալ շատ գեղեցիկ կրնայ արծաթազօծուիլ այս կերպով , և անոր անախորժ հօտն ալ չի մնար , և կատարեալ արծաթիտեսքն ու արտաքին յատկութիւնները կ'առնու : Ծափծու երկաթեղէններն ալ շատ գեղեցիկ կրնան արծաթազօծուիլ այս արուեստով :

Արծաթազօծումն ալ ոսկէզօծման պէս մետաղներունքից կամ շատ արծաթազօծելու լուծութեան մէջ կենալէն կը կախուի , և ըստ այսմօծումն ալ բարակ կամ հաստ կ'ըլլայ , և այս բանիս արծաթազօծելու մետաղներուն բնութիւնը ամենակին զգալի ազդեցութիւն ըներ : Փորձուած ալ է որ արծաթը երկաթէն աւելի ուշ մետաղներուն վըրայ կը միանայ :

Փլաղինաղօծուն : — Փլաղինի և փողասինի կրկին քլորուրը ² կիզղղական փողասի ³ մէջ լուծուելով տեսակ մը հեղանիւթ կը դոյանայ , որ առաջիններ

րուն հաւասար դիւրութեամբ ամէն մետաղ կրնայ փլաղինաղօծել :

Ո՞էկ հազարորդակրամ ¹ փլաղինով յիսուն հարիւրորդամեդր ² քառակուսի մակերևոյթ հաւասարապէս կրնանք փլաղինաղօծել , և այս փլաղինէ թաղանթին թանձրութիւնը մէկ հարիւրհազարերորդ հազարորդամեդր ³ կ'ըլլայ . որ է ըսել հաւասար այնպիսի ամենանուրբ թաղանթի մը որուն թանձրութիւնը ուղղակի դիտողութեամբ աչքի տակ չենք կրնար ձգել :

(ՄՆՍՑԱՆ ՈՒՐԿԸ ԱԽԳԱՄ)

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ո՞րդուն ղանաղան էլիմաներու բաէ ունէ . շած յարկունենաները ⁴ :

Խորեստան , որ Խիոյ մէջ կ'ինայ , Եզիպտոսի սահմանակից է և անկէց Առեղի պարանոցով կը բաժնուի : Այս երկիրս լեռներու շղթայ մըն է , որոնց մէջ ամենէն բարձրը Լիբանանն է : Խորեստանի հարաւային կողմը , այսինքն Յորդանանու հովիտը՝ հրաբխային երկիր մըն է . և երբեմն շարժեր ալ կը պատահին : Առեկալ ծովուն կուպրի և ծծմբի աղբիւրները , իրեն ափունքը գտուած լաւաներն ու մնկաքարերն և Դապարիէի տաք ջրերը կը ցուցընեն թէ այս հովիտս հրաբխի մը կեդրան է , որուն կրակը գեռ մարած չէ :

Խորեստանի , ինչպէս նաև Եզիպտոսի , Պարսկաստանի ու զբեթէ բովանդակ հարաւային Խիոյ սոսկալի պատիմն է մարախը , որ բազմութեամբ ամպի պէս երկինքը կը միջնցունեն , և երբոր վար կ'իջնեն՝ բոլոր երկիրը կը

1 Գ.լ. · Cyanure d'argent.

2 Գ.լ. · Chlorure double de platine et de potassium.

3 Գ.լ. · Potasse caustique.

4 Տես երես 92 , 205 :

ծածկեն : Ի արեբաղդաբար այս պատիժու ստէպ չի պատահիր . վամն զի մահաբեր հիւանդութիւններ կը պատճառէ : Ինակիչները ասոնց դէմ սաստիկ ծուխ կ'արձակեն , որպէս զի խըդդուխն . բայց գլխաւորապէս հարաւային ու հարաւային արևելեան քամիները շատ կ'օգնեն , որ զանոնք բոլոր ՈՒԾԵՐկրական ծովը կը թափեն . տեսակ մը թուզուն ալ կայ , որ սահարձար կ'անուանեն , այս միջատներուն ոխերիմ թշնամին է և զանոնք աղէկ մը կը ջարդէ :

Ի սորեստան ընդհանրապէս երկու կլիմայ կայ , մէկը սաստիկ տաք , որ է դէպ 'ի ներս եղած դաշտային կողմերը , մէկան ալ բարեխաւոն՝ որ է լեռնոտ դիերը :

Ի սորեստանի բնակիչներն ալ Ազիպտացոց պէս սկզբանէ 'ի վեր շատ փոփոխութիւններ կրեր են : Հիմայ իրեք գլխաւոր ցեղ կրնան բաժնուիլ . մէյմը անոնք որ Հունաց ստորին կայսերութեան ատենի բնակչաց սերունդքն են . երկրորդ անոնք՝ որ Արաբացւոց արշաւանքէն ետև սերած են , և երրորդ հիմնակուան օսմանցի տաճկլները : Ի այց Ի սորեստան ամէն ցեղ ալ հաւասարապէս կրնայ աղէկ առաջ գալ , և ամենախն փոփոխութիւն չեն կրեր , բաց 'ի ինչ որ կլիման կը բերէ . անոր համար դէպ 'ի հարաւ դաշտային երկիրներու բնակիչները հիւսիսայիններէն աւելի թխագոյն են . ասոնք ալ լեռնաբնակներէն աւելի թուխ են :

Ինդհանրապէս Ի սորեստանցիք միջահասակ են և երկու սեռից մէջ ալ սապատողն և կամ ցուցանքաւոր քիչ կը գտուի : Ի աց 'ի Աւրելոյ Պալար ըսուած հիւանդութենէն երկրին սեփհական ուրիշ հիւանդութիւն չի կայ հոն . իսկ մնացած հիւանդութիւններն են թանձ , մաղմացային շարունակ տենդ , թուլական տենդ , և ընդհատ տենդ . ծաղիկ հիւանդութիւնն ալ երեմն շատ ջարդ կ'ընէ հոն : Արիւն առնուլը այս հիւանդութեանց հոն քիչ օգուտ կ'ընէ . բայց փսխողականներն ու անուշու թը թուաշ մաքրողականները շատ գործա-

ծական են և մեծ օգուտ կ'ընեն :

Պիրափերիստանի լեռնաբնակները շերմակ են , իսկ ծովեզերեայ ու դաշտային բնակիչները աւելի թխագոյն են . այս բանիս պատճառ՝ վամն զի դրից բարձրութիւնը ինչ ազդեցութիւն ունի նէ , ըստութեան աստիճաններուն շատութիւնն ալ նոյն ազդեցութիւնն ունի : Արևետագարձէն անդին եղած Աֆրիկէի բնակչաց մէջ , Կարմիր ծովէն սկսեալ ինչուան Ովկիանոս այնպիսի սեւեր կան որ կարծես իրօք հնդիկ են : Դալարի կղզեաց բնակիչքը գրեթէ բովանդակ ձերմակի ու սեկի խառնուրդէ սերած են , և սովորաբար կը կարծուի թէ առջի Փորդուգէշներէն սերած ըլլան որ հման բնակեցան ու սեւերու հետ խառնուեցան :

Ունեկալի բնակիչները որ Կամպիագետին մօտերը կը բնակին շատ սե են , բայց գեղեցիկ ու վայելուչ են . նոյնպէս կանայք ալ՝ որոնք ծխքաշը բերան ներնէն վար չեն առնուր , և քրտինքնին ալ քիչ մը գարշահոտ է :

Կորէա կղզւոյն և Դալարի գլխոյ ծովեզերեայ բնակիչները թուխ սե են , բայց կազմուածքնին համեմատ է , և ուրիշ սեւերը ամենասկին չեն սիրեր : () զիի խենթ են , որով շատ անգամ կը գինովան . և քիչ մը օղի ձեռք բերելու համար տղաքնին , աղգականնին ինչուան իրենք զիրենք ալ կը ծախեն : Այս սեւերը սովորութիւն ունին սուր գայլախազով մորթերնուն վրայ ծաղկը կը կը կենդանիներ նկարելու : Այս սովորութիւնն շատ տեղ կայ . և ինչուան հիմայ ալ Արապներէն շատը իրենց մորթը կը նկարեն և ասեղի ծայրով մէջը գոյն կը լեցունեն : Ուտնուզի կանայք սլաքի մը ծայրով մորթերնուն վրայ գրեր կը զրեն ու մէջը արջասապ կը լեցունեն :

Կուինէայի սեւերը թէպէտ քաջառողջ են բայց հազիւ թէ կը ծերանան , և քառասուն տարուան կը զառամին : Կուինէայ կենաց կարձութեան պատճառը բնութեան դրած սահմաննէն շատ առաջ ամուսնանալն է :

Աւերը իրենց յատուկ դէմք մը ունին, և ինչպէս որ մարդուս երեսը երբոր սաստիկ լցոս զարնէ ու ջերմութիւն ցոլանայ թնչ ձեւ կ'առնու նէ՝ ասոնց դէմքն ալնոյն ձեւն ունի. երեմնին կըծկած, յօնքերնին կնճռած, արտևանունքնին խուփ, բերաննին այն ձեւն առած թնչ ձեւ որ կ'առնու նու ըսելու ատեն : Ինդհակառակն Ճերմակներուն գծագրութիւնը աւելի երկայն է, աշուշնին աւելի դուրս, և դէմքերնին աւելի զուարթերես : Աւերուն աշուշները կըոր են, քթերնին տափակ, գծագրութիւնին հաստ, պուկունքնին թանձր, մազերնին ալ գոռուզ. ասոնց գանկը Ճերմակներուն գանկին կրկին հաստութիւնն ունի, ոսկորնին աւելի հաստատուն, մակրնին աւելի պինդ, բանականութիւննին ալքիչ բաց է, և մոքերնին շատ գժուար է որ կրթուի : Ա'արդկային ցեղին մէջ ասոնք բազմաթիւ չեն, և միայն երկրիս ամենէն տաք մասին մէջ կը գտուին . այրեցեալ գոտիին սահմաններէն դուրս ամեննեին չեն գտուիր և երկրիս բոլոր բնակչաց տասուերկուերորդ մասն են . ասոնց թիւը Ճերմակներուն ու թիսագոյններուն թուոյն այնպէս կը համեմատի, ինչպէս որ գրեթէ 1^ւ առ 23 կը համեմատի :

Աւերը երբոր կը ծնին՝ գրեթէ բոլորովին Ճերմակ են, միայն եղունգներնուն ծայրը սեղակ գիծ մը ունին : Իւածին ինն օրը այսպէս Ճերմակ կը մնան, ու ասկէ ետեւ կը սկսին սկնալ :

Սորս խառն ծննդոց մէջ բնութիւնը հետևեալ կարգը կը բռնէ . ան սե հօրէ ու Ճերմակ մօրէ ծնած տղան՝ կէս սե կ'ըլլայ, որուն Պաղղիացիք միւլադ կ'ըսեն . թ. միւլադ ըսուած հօրէ ու Ճերմակ մօրէ ծնածը՝ թիսագոյն կ'ըլլայ, որուն Պաղղիացիք ժառադան կ'ըսեն . թ. ժառադան ըսուած հօրէ ու Ճերմակ մօրէ ծնածը՝ հօրմէն աւելի Ճերմակ կ'ըլլայ, որուն օդական կ'ըսեն Պաղղիացիք . թ. օդական ըսուած հօրէ ու Ճերմակ մօրէ ծնածը՝ բոլորովին Ճերմակ կ'ըլլայ :

Այնպէս ասոր հակառակ չորս ծնըն-

դեամբ ալՃերմակը կը սենայ. ան Ճերմակ հօրէ ու սե մօրէ ծնած միւլադ երկայն մազերով կ'ըլլայ . թ. միւլադ հօրէ ու սե մօրէ ծնած ժառադանը եօթը ութերորդը սե կ'ըլլայ . թ. ժառադան հօրէ ու սե մօրէ ծնածը բոլորովին սե կ'ըլլայ, գուուզ մազերով :

Տեսակ մըն ալ մարդիկ կան սե կամ ձիթագոյն ծնողացմէ սերած որ ալպինս կամսպիտակամորթ կ'ըսուին . ասոնք մարդու մասնաւոր ցեղ կամ տեսակ չեն, իրենց մորթին կալնագոյն սպիտակութիւնն պատահառներէ առաջ կու գայ : Ալպինոսները իրենց երկրին մէջ սակաւագիւտ ու սրբազնան կենդանեաց կարգը կը զրուին, և Ալպիկէի ու Հնդկաստանի մեծամեծները իրենց պալատին մէջ ասոնցմէ մեծ պատուավ կը պահէն : Այս թշուառ ու ցաւալի արարածները շատ աղէկ կրնան համեմատիլ (Օ ուիցերիի որեդիններուն հետթէ իրենց բարոյական կարողութեան ցը կողմանէ և թէ մարդկութեան ստորնագոյն աստիճանին մէջ գտնուենուն : Վրեդինները խուլ, համի ու բթամիտ ենև մեծ մեծ խոյեր ունին վզերնուն տակէն կախուած . ոչ կատաղի են և ոչ ալշար, կարծես որ մտածելու կարողութիւնունին, բնական կարևորութիւնները լաւ կը զգան և անձնատուր են զգայական ամենայն հաճոյից : Իրենց մորթին գցնը կապուտկած է, ապուշ ու անկարող կը ծնանին, և ինչուան մահնոյնպէս կը մնան, շատ գժուար է այս խղճալի արարածոց բնական ու բարոյական վիճակին գարման մը ընելլ : Այնպէս են սպիտակամորթներն ալ, որոնց ապշութիւնը քրեդիններուն կը հաւասարի, և թէպէտ խօսելու կարողութենէն անոնց շափ բոլորովին զուրկ չեն՝ բայց տեսութեան ու լսողութեան շատ մեծնեղութիւն կը քաշեն : Իրենց ազքին կազմութիւնն այնպէս է որ լցոս չեն կրնար տեմնել . բնութեամբ շատ տկար

1 Քրեդիններուն վայ տես Բազմավէպ հատոր դ. Երես 188 :

են, հասակնին հազիւ թէ չորս ոտք ու հինգ բթաշափ կը բարձրանայ, մորթերնուն զոյնը բաց ձերմակ կամ թէ ձերմակ մոմի գոյն է, ամենեխն մօրուք ու մորթերնուն վրայ մազ չունին, գըլուխներնուն մազը՝ Աֆրիկէ թաւ ու գոռող է, Իսիա երկայն ու ցանցառ է. յօնկերնին ու արտևանունքնին մետաքսի պէս կը փայլին և աջուրնին կաքաւի աջքերուն ձեն ունի ու հազիւ թէ իրենց հասակին երեմներորդ տարւոյն կը համին և առանց երկայն ապրելու այս աշխարհքէս կ'ելլեն: Այս տառապեալ ու խղձալի արարածներս աւելի Աֆրիկէի մէջ տեղուանքը կը գտնուին, Իսիոյ հարաւային ծայրերը, հարաւային ծովուն կղզիներուն մէջ, և Ամերիկա՝ Տարիէնի գաւառը:

• Իտւն սպիտակամորթներն կամ ալպինոսները պէտք չէ շփոթել այն սեւերուն հետ որ դիպուածական պատճառներով կը ձերմըկին: Աները յատուկ հիւանդութիւն մը ունին որ մասամբ իրենց բնական սեւութիւնը կը փոխէ: Իսիկայ տեսակ մը սպիտակ դալուկն է, որ միայն եղունգներուն արմատը դեղնորակ սե կը թողու. մարմիննին բուլը կը փշտի, և մորթերնուն վրայ կապուտկած բծեր կը տեսնուին. աջքերնուն ծիածանը գոյնը կը կորսընցընէ ու կը մժագնի: Այրոր այս հիւանդութիւնը չի հիննար՝ օձու և իժի միս ու տելք կրնան բժշկուիլ. այն ժամանակը մարմիննին առաջին սե գցնը կ'առնունորէն. ապա թէ ոչ երեսուն տարին հասած կը մեռնին:

Աֆրիկէի ծովեզերքներն ու ներսերը բնակող ժողովուրդները, Եէկրոյ ըստած գլխէն ինչուան քառակ Առլասը ըստած գլուխը, քիչ ծանօթ են: Այս շափ միայն կը գիտցուի որ Վաֆրաստանցիք որ հարաւային Աֆրիկէի մէկ մասը կը բնակին, քան զհնդիկները աւելի սե են, և այլ և այլ ազգեր կը կազմեն, որոնք զբեթէ ամէնքն ալ անգութ ու բարբարոս են: Խնչուան հիմայ ճանապարհորդք միայն Ապալալի երկրին բնակիչներն ու Բարեկյուսոյ

գլխոյն ()դդէնդոդները կրցեր են աղէկ մը դիտել:

Ապալալի երկրին այլ և այլ ժողովուրդները միաբան պղտի պղտի գեղեր կը բնակին, և զիրենք կաւավարողները իրենց ծերերն են. Իսոնք մարդասէր են և հիւրընկալ, և գլխաւոր ըզբաղմունքնին երկրագործութիւն ու կով և այծ դարմանել է. Հացով ու մնով կ'ապրին և տնական սիտոյից մէջ թըթուած կաթ կը գործածեն: (Ծ)վագոյն են և մազերնին կարծ ու գոռող:

()դդէնդոդները բարեկազմու վայելու են, սեւերուն պէս աջքերնին խոշոր է, քթերնին տափակ, պուկունքնին հաստ, մազերնին կարծ ու թաւ, բայց մորթերնին ծիթագոյն է: Այս ժողովուրդները ուժեղ, ճարտար, դիւրաշարժ ու զարմանալի թեթելընթաց են, զէնք գործածելու շատ ճարպիկ: Ին ()դդէնդոդները որ բնակութեամբ Վաֆրաստանցոց կը մօտիկնան՝ թափառական, աղտոտ, և վայրենի կեանք մը կ'անցընեն: Խնչպէս են նաև Աատեքասները, որ կրօն, ծէս չունին և Իստուծոյ և ոչ մէկ պղտի գաղափարը ունին, թէպէտ հիւրընկալ, մարդասէր ու բարեմիտ են. կանանց հասակը երիկ մարդկանցմէ աւելի կարծ է:

()դդէնդոդները գլխաւորապէս հովիւ կամ որսորդ են, և անդադար պատերազմի հետ. Օուիցերաց պէս իրենք զիրենք կը ծախսեն իրենց մերձաւորները պաշտպանելու համար: Ատենով այս ժողովուրդները սովորութիւն ունէին որ երբոր ազգականներնէն մէկը կը մեռնէր ձեռքի մատուցներնուն մէկ խաղը կը կտրէին, այնպէս որ մէկը ասոնց մատուցներուն նայելով կ'իմանար թէ ընտանեացմէ քանի հոգի մեռեր են: Այս սովորութիւնը Բարակուայ ու Վալիֆոռնիա ալ կար, և կուարանիսները ինչուան հիմայ ալ ունին:

()դդէնդոդները մտածելու ու խորհելու գործողութիւնները կենաց պատիժը կը համարին: Այս ժողովուրդները շատ ծոյլ են, զբեթէ ամէն բան

կանայք կ'ընեն . ժամանակին մէծ մա-
սը քնանալով կամ իրենց առկախեալ
մաշճին մէջ պառկելով կ'անցընեն . և
թէ որ մէկն ուզէ ասոնց անկողինը գնե-
լու՝ առաւօտը կը ծախեն առանց մտա-
ծելու թէ իրիկուան ինչ պիտի ընեն :

Ընէ որ Եմերիկայի այլ և այլ գաւառները պտղատեղու ելլենք, հիւսիսային կողմերը դիմացնիս Խարոպայի ու Եսսուիսային կողմին նման ժողովուրդներ կ'ելլեն : Տէւխսի նեղուցին վայրենիները ձիթագոյն են, տգեղ, կարծահասակ, բայց ուժեղ, սրունքնին կարծ ու հաստ, երկայն կ'ապրին և շատերը ինչուան հարիւր տարին կը հասնին : Եսոնք լափոններուն գոյնն ու ձեր և սովորութիւններն ունին . և ինչպէս լափոններուն մէջ Ֆիններ կը գտուին որ Ճերմակ, գեղեցիկ, երկայնահասակ ու բարեկազմ են, այսպէս ալ Տէւխսի նեղուցին բնակչաց մէջ ալ Ճերմակ մարդիկ կը գտուին ամեննեին նման Ֆիններուն : Հուտարնի ծոցին մօտերն ալ բրդոտ մարդիկ կը գտուին ամեննեին Խակոյի վայրենիներուն նըման, և Քանատայի ու Յամաք-Խրկին բոլոր բնակիչները այնչափ Խաթարներուն կը նմանին՝ որ եթէ տեղեաց տարբերութիւնը ըլլար, նոյն ազգը կրնացին սեպուիլի :

(ՄՆԱՑԱՆԻ ՈՒՐԻԾ ԱԿԴԱՐ)

ԱՀԱՐԱԳԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԵԿՆ.

Այս մատուցությունը կազմության վեհական մասին է և պատճենահանձնության մասին:

“ՍՈՐՏԱՌԵՆ հաշիւներէ առնելով, զորն որ Տար-
սի անունով գաղղացին՝ի պաշտօնէ ըրեր է, կը
աեսնենք որ Լոնտրայի բովանդակ մակերևոյթը
210 միլիոն քառակուսի մետր է, բնակչաց թիւը
1 միլիոն 924,000 հոգի է, աներուն թիւը 260,000
է, ճամբաներուն երկայնութիւնը 1 միլիոն 126,
000 մետր է, իսկ ճամբաներուն մակերևոյթը ա-
ռանց մայթերն 1 առնելու 6 միլիոն մետր է, լուա-
լիքներուն երկայնութիւնը 639,000 մետր է:

• ४८०. गोप्यकालीनः

Φωρηθησει την πλημμυρακη μακρινη στην 34 Ημερον
 379.016 φωτιακουσι Μετρη ή, ενω ακινητος 1 Ημερον
 53.897 ησηφη ή, ανηκουσι θημηρη 29.526 ή, ακινητος
 140.000 έτη και μετρηθησει 425.000 Μετρη ή,
 Διαδικασιανη την πλημμυρακη μακρινη στην, απωνηγη μετρησει
 ιερηθησει 3 Ημερον 600.000 φωτιακουσι Μετρη ή,
 Επιταγηθησει την πλημμυρακη μετρηθησει 135.900 Μετρη ή,
 μετρηθησει την πλημμυρακη μετρηθησει 888.000 Μετρη ή:

Աստվ Լոնտրա մարդ գլուխ 100 մեդր մակե-
րևոյշ կ'իշնայ : Լոնտրա իւրաքանչիւր տան 7 ու
կէս հոգի կ'իշնայ , իսկ Փարփղ իւրաքանչիւր տան
34 հոգի կ'իշնայ : Լոնտրա իւրաքանչիւր տան 40
մեդր և 40 հարիւրորդամեծքը Ճամբռու երկայնու-
թիւն կ'իշնայ , իսկ Փարփղ իւրաքանչիւր տան 15
մեդր Ճամբռու երկայնութիւն կ'իշնայ :

Այս համեմատութիւններէս երկու մայրաքաղաքացւութիւնը կ'իմացուի . ուսկից կը հետեւի թէ ուրեմն Լոնտրա շատ անչէն մակերևոյթ կայ, և թէ ան տեղի աները շատ բարձր չեն, և թէ իւրաքանչիւր բնտանիւր իւր տունն ունի:

Պատմական արվեստական գրեպութ :

ՀԱՅՊՈԽ ըսուած երեկելի արգեսեան ջրհորը,
որ հանական Պատիկերայի Քիսինկէն քաղաքը
1832ին սկսեր էին բանալ, այս օրեւս լընցեր է :
Քիսինկէն քաղաքին դիմք աղջոյն հովիտի մը մէջ
կ'իշնայ, և Պալմիկ ծովուն երեսէն 300 մետր
բարձրութիւն ունի : Անցեալ տարի յունիսի մէջ
այս ջրհորին խորութիւն 560 մետր հասեր էր,
բայց յառաջ քանի այս խորութիւնն համեմը լոււ, ապի
այլ և այլ կարգերէ անցեր են որ մէկմէկէ կրանի-
դի ժայռերով բաժնուած էին : Վերջը հասեր են
ածխային թթուուաւ կազի մը կարգի, ետքը նորէն
կրանիդի և վերջապէս այս տարի հոկտեմբերի 12ին
սասափիկ որոտմամբ ջրհորին բերնին վրայի գործիք-
ները կործ աներ են և սկսեր է 12 հարիւրորդա-
մետր տրամադծով ջրեղէն սիւնակ մը սասափիկ
բռնութեամբ ինչուան 30 մետր բարձրութեամբ
վեր նետուիլ : Այս ջուրը յստակու վճիր է, գետ-
նէն ելլելու ատեն ֆարէնհայդի 66° բարեխառա-
նութիւնն ունի և 0/0ին 3 1/4 զուտ աղ կը բերէ,
որով վայրկեանը 12 խորանարդ մետր աղ կու տայ-
խակ ջրհորին խորութիւնը 630 մետր է :

Հաշիւ կ'ընեն որ ասկէ տարին 3 մլնո՞ն հազարակամարդ կրնայ ելլել, և ամենաժաման ալ սեպելով՝ ըստ 300.000 տարի կան եկամոււա կու տայ:

ՆՈՅԵՄԲԵՐԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԿՐ ՄՐԱՄՈՒԿ